Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀՈՒՆԳԱՐԻԱ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ

3. Վայրը և ժամկետները

2026 թվականի հունիսի 22-ից 26-ը, Բուդապեշտ և Դյոր քաղաքներ (Հունգարիա)

4. Հրավիրող կողմը

«QS Quacquarelli Symonds» կազմակերպություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն «QS Higher Ed Summit: Advanced Business Skills Forum» և «QS Higher Ed Summit» միջոցառումներին

6. Քննարկված թեմաները

1. համալսարանների միջազգային մրցունակության բարձրացումը,
2. կրթության և աշխատաշուկայի փոխկապակցվածությունը,
3. գիտության և արդյունաբերության համագործակցությունը,
4. թվային փոխակերպումը և արհեստական բանականության կիրառությունը,
5. միջազգային գործընկերությունների զարգացումը,
6. ակադեմիական շարժունությունը, ներառական կրթությունը և ինստիտուցիոնալ առաջնորդությունը,
7. բիզնես կրթությանը, առաջնորդությանը և գործնական հմտությունների զարգացմանը վերաբերող հարցեր,
8. Հունգարիայի և QS Quacquarelli Symonds կազմակերպության հետ համագործակցության հնարավորությունները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

«QS Higher Ed Summit» միջոցառման առաջին օրը՝ 2026 թվականի հունիսի 23-ին Դյոր քաղաքում տեղի է ունեցել «Advanced Business Skills Forum»-ը, որին հանդես եմ եկել որպես բանախոս «Potential partnerships between Armenia and Hungary and Rest of EU. Presentation on Partnership Opportunities» խորագիրը կրող ելույթով՝ անդրադառնալով վերջին տարիներին բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում իրականացված լայնածավալ բարեփոխումներին և արձանագրված ձեռքբերումներին, այդ թվում՝ ՀՀ բարձրագույն կրթության ոլորտում իրականացված օրենսդրական ամենամեծ բարեփոխումներից մեկին՝ 2025 թվականին «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի ընդունմանը, որը միտված է բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում մրցունակ և դիմակայուն համակարգերի ձևավորմանը, բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում ներգրավված դերակատարների ակադեմիական ազատության և ինքնավարության երաշխավորմանը: Անդրադարձ է կատարվել նաև ՀՀ կառավարության կողմից նախաձեռնված ամենահավակնոտ և ծավալուն նախաձեռնություններից մեկին՝ «Ակադեմիական քաղաք» ծրագրին՝ որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական կրթական միջավայրի ապահովման կամպուսային կլաստերների համախումբ:

Ելույթի ընթացքում ներկայացրել եմ նաև Հունգարիայի և, ընդհանուր առմամբ, ԵՄ երկրների հետ համագործակցության զարգացմանն ուղղված քայլերը, այդ թվում՝ ԵՄ բարձրագույն կրթության և հետազոտական տարածքներին ինտեգրմանը՝ որպես ՀՀ ոլորտային բարեփոխումների կարևորագույն մաս՝ ընդգծելով այն հանգամանքը, որ Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրումը խորացնելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը 2021 թվականից մասնակցում է ԵՄ «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարությունների ծրագրին: 2024 թվականին 5 ազգային մրցութային ծրագրեր ներառվել են ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ասոցացման համաձայնագրի Հավելվածում «Փոխադարձության սկզբունքի» ներքո, որը հնարավորություն է տալիս եվրոպական հետազոտողներին և շահագրգիռ կառույցներին ընդգրկվելու Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից իրականացվող մի շարք ազգային ծրագրերում: Ներկայացվել է նաև ՀՀ-ԵՄ համագործակցության արդյունավետ գործիքներից մեկը՝ ԵՄ «Էրազմուս+» ծրագրին Հայաստանի՝ որպես ծրագրին չասոցացված երրորդ երկրի մասնակցությունը: Ծրագիրը

հնարավորություն է տալիս մասնակցելու բարձրագույն կրթության, երիտասարդության, մասնագիտական կրթության և ուսուցման, ինչպես նաև սպորտի ոլորտում կարողությունների զարգացման և ուսանողների ու երիտասարդների շարժունության ծրագրերին:

Անդրադարձ եմ կատարել նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ու Հունգարիայի արտաքին գործերի և առևտրի նախարարության միջև 2025 թվականի մայիսի 27-ին ստորագրված համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրով նախատեսվող «Ստիպենդիում Հունգարիկում» ծրագրին մասնակցության վիճակագրությանը:

«QS Higher Ed Summit» միջոցառման շրջանակում պանելային քննարկումների ընթացքում քննարկվել են բարձրագույն կրթության ոլորտի ռազմավարական զարգացմանը վերաբերող հարցերի լայն շրջանակ, այդ թվում՝ համալսարանների միջազգային մրցունակության բարձրացում, կրթության և աշխատաշուկայի փոխկապակցվածություն, գիտության և արդյունաբերության համագործակցություն, թվային փոխակերպում և արհեստական բանականության կիրառություն, միջազգային գործընկերությունների զարգացում, ակադեմիական շարժունություն, ներառական կրթություն և ինստիտուցիոնալ առաջնորդություն: Բացի այդ, Advanced Business Skills Forum-ի շրջանակում քննարկվել են բիզնես կրթությանը, առաջնորդությանը և գործնական հմտությունների զարգացմանը վերաբերող հարցեր:

Միջոցառումների երկրորդ օրը կայացան նաև Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի և «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի տնօրենի առանձին աշխատանքային քննարկումները QS-ի մի շարք ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում, ի թիվս այլնի, անդրադարձ է կատարվել հետևյալ հարցերին.

առաջիկայում նախատեսվող համագործակցության մանրամասներին և տեխնիկական ընթացքին,

աշխատաշուկայի գլոբալ վերլուծության և հմտությունների ու կարողությունների հաշվառման ոլորտում QS-ի ընձեռած գործիքակազմին,

ՀՀ բուհերի վերաբերյալ առկա տեղեկատվությանը, որի հիման վրա իրականացվում է բուհերի QS Rankings վարկանիշավորումը,

խորհրդատվական աշխատանքներն իրականացնող թիմի գործունեության նախատեսվող շրջանակին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթեր

Միջոցառման առաջին օրը «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի տնօրեն Արմեն Սիմոնյանի և QS-ի փոխտնօրեն Բեն Սոութերի միջև կնքվել է համագործակցության վերաբերյալ համատեղ հայտարարություն, որով սկիզբ է դրվելու ՀՀ որոշ բուհերի համար QS միջազգային վարկանիշավորման կազմակերպության կողմից խորհրդատվական ծառայությունների մատուցման գործընթացին, ինչը հանդիսանում է Ակադեմիական քաղաք ծրագրի և կրթության զարգացման 2030 ծրագրի կարևորագույն հանձնառություններից մեկը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատանքային հանդիպումների ընթացքում QS-ի գործընկերների հետ քննարկվել են առաջիկայում նախատեսվող համագործակցության մանրամասները, տեխնիկական ընթացքը, համաժողովին ՀՀ բուհերի ակտիվ մասնակցության հարցը, ինչպես նաև ապագայում Հայաստանում QS որոշ համաժողովների կամ գիտաժողովների անցկացման հնարավորությունը:

10.Ստորագրությունը, ամսաթիվը

7/1/2026

X

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Signed by: HAYOTSYAN SARGIS 3611840777

Սարգիս Հայոցյան

01 հուլիսի 2026թ.